Известия АН Армянской ССР. Науки о Земле, 6, 23—34, 1975

Լ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Ականավոր երկրաբան, Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր-պրոֆեսոր Հովհաննես Կարապետյանը (1875—1943) Հայաստանի երկրաբանական ծառայության սկզբնավորման շրջանի այն նշանավոր գործիչներից էր, որի բազմակողմանի ու բեղմնավոր գործունեությունը գալիք դեր է խաղացել ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հետազոտման, լեռնահանքային արդյունաբերության վերականգնման ու զարգացման գործում։



Հով. Կարապետյանը հանգիստացել է Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի երկրաբանական ինստիտուտի (1935) և նրա թանգարանի (1937) հիմնադիրը։ Նա իր բոլոր կարողություններն ու գիտելիքները, իր փայլուն տաղանդն ու անսպառ ուժն-ի սպաս է դրել երկրաբանական ծառայության զարգացման և կադրերի պատրաստման գործում, մեծ սիրով ու նվիրվածությամբ ստեղծագործել է սոցիալիստական շինարարության և մշակույթի ամենատարբեր բնագավառներում։

Հովհաննես Տիգրանի Կարապետյանը ծնվել է 1875 թ. հունիսի 2-ին, Ախալքալաք գավառական քաղաքում, արհեստավորի ընտանիքում։ Նրա մանկությունը և պատանեկությունը անցել են կարիքի ու զրկանքների պայմաններում, պայմաններ, որոնք հանգիստացել են նրա «ամենամեծ դպրոցը», մղել աշխատանքի և ուսման, ուղի հարթել դեպի նոր կյանք։ Նախնական կրթությունն ստացել է Հայրենի քաղաքում, իսկ այնուհետև սովորել է Էջմիածնի

Գեորգյան ճեմարանում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտել է 1895 թվին։

1895—1896 ուսումնական տարում նա պաշտոնավարում է Ախալքալաքի հայոց արական դպրոցում նշանավոր գյուղագիրներ Հարությյուն Ճուղուրյանի և Արշակ Ադապյանի հետ, որոնց ազդեցության տակ հետագայում գրում է գյուղական ծանր կյանքը պատկերող մի քանի պատմվածքներ։

1896 թ. օգոստոսին Հովհ. Կարապետյանը հրավիրվում է Թիֆլիս և նշանակվում Հավլաբարի ծխական դպրոցի ուսուցիչ։ Այստեղ նա պաշտոնավարում է մինչև տարվա վերջը, մինչև ցարական իշխանության կողմից հայկական դպրոցների վերջնական փակելը։ Ահա հենց այդ օրերին, անգործ ուսուցիչը ծանոթանում է լեռնային ինժեներ Բարանովի հետ, որը ժամանել էր Թիֆլիս Կովկասում ոսկու հանքավայրեր որոնելու համար։ Բարանովի հրավերով Հովհաննեսը մասնակցում է նրա արշավախմբի աշխատանքներին և մոտ մեկ տարի շրջագայում է Կովկասի տարբեր շրջանները։ Հենց այդ արշավախումբն էլ Հովհաննեսի համար ունեցավ բախտորոշ նշանակություն, քանի որ նա այդտեղ ստանալով իր առաջին երկրաբանական մկրտությունը, որոշեց իրեն նվիրել երկրաբանության և լեռնային գործին, մի բան, որի մասին նա երազել էր դեռևս վաղ հասակից։

1898—1906 թվականների ընթացքում Հովհաննեսը շրջում է Կովկասի հեռավոր անկյունները, ուսումնասիրում է դրանց երկրաբանական կառուցվածքը և ընդերքում տարածված օգտակար հանածոները, իսկ այնուհետև մշակում է իր հավաքած նյութերը՝ հետագա հրապարակման համար։ Միաժամանակ նա կարդում է երկրաբանության և լեռնային գործին նվիրված գրականություն, ինչպես նաև ծավալում է հասարակական, հրապարակախոսական և լուսավորական գործունեություն։

Այդ տարիներին Հովհաննեսը ղեկավարում է «Կովկասյան հայկական բարեգործական ընկերության» գործերը և մշակութային գործիչ Մարիամ Թումանյանի հետ մեկտեղ նախաձեռնում ու իրականացնում են մի շարք միջոցառումներ։

Նույն տարիներին Հովհ. Կարապետյանը դգալի դեր է կատարում «Հայկական դրամատիկական ընկերության» ստեղծման, այնուհետև ղեկավարման և աշխատանքների ծավալման ուղղությամբ։ Օժտված լինելով դերասանական ձիրքով, նա ակտիվ մասնակցություն է ունենում հայկական դրամատիկական խմբի և Թիֆլիսի ժողովրդական տան սիրողների ներկայացումներին։ Նրա անմիջական ղեկավարությամբ բեմադրվում է Մոլիերի «Ակամա ամուսնություն» կատակերգությունը, Էմին Տեր-Գրիգորյանի «Ի՞նչ անեմ ես» և Մագաթյանի «Կրթ-կրթ» ոգեվիլները, Նայդյոնովի «Վանյուշինի զավակները» դրաման և այլն։ 1903—1907 թվականների ընթացքում Հովհ. Կարապետյանը Թիֆլիսում լույս տեսնող «Новое обозрение», «Тифлисский листок» և «Тифлисская газета» թերթերում տպագրում է «Հայկական դրամա» հոդվածաշարը, որը հանդիսանում է հայ թատերական Թիֆլիսի տարեգրությունը։

Հայկական թատրոնին մատուցած ծառայություններից բացի, Հովհ. Կարապետյանը դգալի գործ է կատարել նաև հայկական ժողովրդական երաժշտության գնահատման ու տարածման բնագավառում։ Դեռ մանուկ հասակից նա սիրել է երգն ու երաժշտությունը և հատկապես հմայվել է հայկական ժողովրդական երաժշտությամբ։ Օժտված լինելով ձայնական լավ

տվյալներով, նա մասնակցել է Ախալքալաքի, Էջմիածնի և Թիֆլիսի մի շարք երկաթմբերում, իսկ երբեմն էլ հանդես է եկել որպես մենակատար։ Վերջապես, Կարապետյանը հանդիսանում է իր ուսուցիչ, անվանի կոմպոզիտոր և խմբավար Քրիստափոր Կարա-Մուրզայի կյանքին ու գործին նվիրված առաջին մենագրության հեղինակը, որը լույս է տեսել Թիֆլիսում, 1904 թվականին։

Սակայն, Հովհ. Կարապետյանը իր բազմակողմանի գործունեության մեջ առաջնություններ վերապահում է երկրաբանությանը և լեռնային գործին, շարունակելով որոնումներն ու պրպտումները։ 1901 թ. Թիֆլիսում լույս է տեսնում նրա «Կովկասում լեռնային գործի զարգացման համառոտ ակնարկ» գրքույկը, որի մեջ տրվում են Կովկասի հարուստ ընկերքի օգտակար հանածոների տարածումը, հետախուզման և արդյունահանման պատմությունը և վիճակը, դրանց տնտեսական նշանակությունը և հեռանկարները։

Մինչև 1905 թ. Հովհ. Կարապետյանը աշխատակցում է «Новое обозрение» թերթին և վարում է նրա մամուլի տեսության բաժինը։ Միաժամանակ նա ամենատարբեր հարցերին նվիրված բազմաթիվ հոդվածներ է տպագրում «Մշակ», «Արշալույս», Հաղթանակ», «Кавказ», «Тифлисский листок», «Вестник горного дела и орошения на Кавказе» և ուրիշ թերթերում ու ամսագրերում։

1906 թ. Հովհ. Կարապետյանը մեկնում է Թուրքիա և Եգիպտոս ճանապարհորդության։ Մոտ երկու ամսվա ընթացքում նա այցելում է Պոլիս, Ալեքսանդրիա, Կահիրե և Նեղոս գետի հովտի տեսարժան վայրերը։ Շրջագայության ընթացքում նա մոտիկից ծանոթանում է Թուրքիայի և Եգիպտոսի տնտեսական ու քաղաքական կյանքին, մտորում հայ և եգիպտացի աշխատավորների ծանր վիճակի, Արաբս և Նեղոս մայր գետերի մասին։ Նա գրում է «Ճանապարհորդական տպավորություններ» և «Նամակներ» հոդվածաշարը, որոնք տպագրվում են «Մշակ», «Աշխատանք», «Черноморский голос» և այլ թերթերում։

1906 թ. Հովհ. Կարապետյանը մեկնում է արտասահման բարձրագույն կրթություն ստանալու։ Մոտ մեկ տարվա ընթացքում նա հաճախում է Լոզանի ինժեներական դպրոցը, Լյեժի համալսարանը, Բրյուսելի պոլիտեխնիկական ինստիտուտը, իսկ այնուհետև տեղափոխվում է Մոնսի (Բելգիա) հանքաբանական բարձրագույն դպրոցը, որտեղ նա անցնում է լեռնային գործի և կիրառական երկրաբանության լրիվ դասընթացը։ 1912 թ. Հովհ. Կարապետյանը «ամենաբարձր գերազանցության դիպլոմով» ավարտում է և ստանում է ինժեներ-երկրաբանի կոչում։

Անհրաժեշտ է նշել, որ Մոնսի դպրոցը արտակարգ ընդունակ և աշխատասեր Հովհաննեսին տվեց ոչ միայն բազմակողմանի մասնագիտական լավ կրթություն, այլև ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու լայն հնարավորություն։ Դեռևս ուսումնառության տարիներին նա այցելում է Եվրոպայի մի շարք հանքավայրեր և կատարում հետազոտական աշխատանքներ։ Հատկապես նա ուսումնասիրում է Բելգիայի ածխի ավազանը և ամփոփելով հորատման և հետախուզման աշխատանքների արդյունքները, գրում է «Ուրվագիծ» աշխատությունը, որը լույս է տեսնում 1912 թվականին, Մոնսում։

Շուտով, այս աշխատությունը, որպես «ածխի հանքավայրերը հետազո-

տերու լավագույն փորձ» տպագրվում է Փարիզում հրատարակվող «Տեսու-թյուն» ամսագրում:

Տարվելով ածխի հանքավայրերի հետազոտման աշխատանքներով և զբաղվելով ածխագոյացման հարցերով, Հովհ. Կարապետյանը այցելում է նաև ածխի գերմանական, ֆրանսիական և անգլիական հանքավայրերը և մշակելով հավաքած նյութերը գրում է «Քարածխային շերտերի պառկած և կախված կողերում երկաթի տոկոսային պարունակությունը որպես նրանց առաջացման բնույթի որոշիչ» աշխատությունը, որը լույս է տեսնում Լյեժում, նույն, 1912 թվականին: Այս աշխատությունն արդեն զգալի հետաքրքրու-թյուն է առաջացնում երկրաբանների լայն շրջաններում և նրանցից շատերը խոստովանում են, որ «այդ աշխատությունը հարստացնում է գիտությունը նոր գաղափարներով», իսկ պրոֆ. Պ. Ֆուրմարիերը գրում է, որ «գիտության մեջ մինչև օրս այդ հարցին նվիրված աշխատություն չի եղել, որ Հովհ. Կա-րապետյանը լրացնում է այդ բացը»:

1912 թվականի հուլիսին, Բելգիական երկրաբանական ընկերությունը, հաշվի առնելով Կարապետյանի գիտությանը մատուցած ծառայությունը, նրան ընտրում է ընկերության իսկական անդամ:

1912 թվականին Մոնսի դպրոցը, նորավարտ Հովհ. Կարապետյանին գործուղում է Անգլիա՝ կատարելագործման համար: Միաժամանակ որոշվում է նրան պահել դպրոցում գիտամանկավարժական աշխատանքի: Սակայն հայրենիքի կարոտը և իր ժողովրդին ծառայելու ջերմ ցանկությունը հանգիստ չեն տալիս նրան և Հովհաննեսը դպրոցում կարճ ժամանակ աշխատելուց հե-տո, որոշում է վերադառնալ Հայրենիք:

1913 թվականին Հովհ. Կարապետյանը վերադառնում է Ռուսաստան և հաստատվում է Թիֆլիսում: Սակայն Անդրկովկասի երկրաբանական կա-ռուցվածքի հետազոտման ուղղությամբ նրան չի հաջողվում ծավալել մեծ չա-փերի և պլանավորված աշխատանքներ: 1913—15 թվականների ընթացքում նա մի քանի մասնավոր ձեռնարկատերերի և արդյունաբերողների հանձնա-րարությամբ հետազոտում է Բազարքյանդի, Թողանալիի, Կասպիի և Թուզի հանքավայրերը, որոնց արդյունքները ամփոփված են նրա մի քանի ձեռագիր հաշվետվություններում և տպագիր աշխատություններում: 1915 թվականին նա հրավիրվում է Թուրքեստան, ուր հետազոտում է Ջերել կայարանի շրջանի քարածխի հանքավայրը, որը շուտով հանձնվում է շահագործման: 1915 և 1916 թվականներին նա երեք անգամ գործուղվում է Իրան, ուր հետազոտում է Ուրմիա լճի և Կասպից ծովի հարավային ափի շրջանները և Թարոմի ու Զինջանի պղնձի հանքավայրերը:

1917—1920 թվականների ընթացքում Հովհ. Կարապետյանը ղեկավա-րում է Ալավերդու խմբի հանքավայրերի հետախուզման աշխատանքները: Նա հատկապես ավելի մանրամասն կերպով ուսումնասիրում է Շամլուղի պղնձի հանքավայրը, կազմում է նրա երկրաբանական քարտեզը և տալիս է երկրա-բանական կառուցվածքի և տարածված քարատեսակների նկարագրությունը: 1917 թվականի մարտին Կարապետյանը ընտրվում է Ալավերդու պղնձաձու-լական գործարանի բանվորների պատգամավորների խորհրդի գործադիր կո-միտեի անդամ:

Հովհաննես Կարապետյանի իսկական ստեղծագործական աշխատանքը և որոնումները ծավալվում են միայն Անդրկովկասում սովետական կարգերի

հաստատվելուց հետո, երբ նա դառնում է Անդրկովկասի լեռնահանքային արդյունաբերության վերականգնման և զարգացման մեծ ու դժվարին գործի իսկական ղեկավարը։ Նա ողջունեց սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում ու անցավ գործի։

1921 թվականին Հովհ. Կարապետյանը նշանակվում է Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչության կից գիտատեխնիկական կոմիտեի լեռնագործարանային սեկցիայի վարիչ։ Իսկ հունիսին՝ ընտրվում է Հայաստանի ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի նախագահության անդամ և Հայաստանի լեռնագործարանային ձեռնարկությունների գլխավոր լիազոր։

1922 թվականին Կարապետյանը նշանակվում է Հայաստանի գիտատեխնիկական խորհրդի նախագահ։ Նույն թվականից նա հանդիսանում է նաև Վրաստանի ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի խորհրդատու և Ռուսաստանի երկրաբանական կոմիտեի աշխատակից։

Այդ շատ պատասխանատու պաշտոններում Հովհ. Կարապետյանը անգնահատելի ծառայություններ է մատուցում Անդրկովկասի լեռնահանքային ձեռնարկությունների վերականգնման, բազմաթիվ հանքավայրերի հետախուզման, լեռնամետալուրգիական արդյունաբերության զարգացման և հանքային հումքի նոր պաշարների հայտնաբերման բնագավառներում։ Նա կազմում է բազմաթիվ հետախուզական պլաններ ու նախագծեր, գրում է մեծ թվով հաշվետվություններ, եզրակացություններ ու զեկուցագրեր։ Շուտով նրա անունը լայն ճանաչում է ստանում Անդրկովկասում։ Նա աշխատում է ոչ միայն երկրաբանական ձեռնարկությունների հարցերի, այլև շինարարության, ջրամատակարարման և էլեկտրաֆիկացման կարևոր հարցերի մշակման ու լուծման վրա։

Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին, Հով. Կարապետյանը մեծ աշխատանք է կատարում նախկինից իրեն հայտնի մի շարք հանքավայրերի գնահատման ու շահագործման հանձնելու ուղղությամբ։ Նա զբաղվում է Ալավերդու և Ղափանի պղնձի հանքավայրերի, Նախիջևանի քարաղի, Տկվիբուլիի քարածխի, Չաթախի երկաթի հանքավայրերի և այլ օգտակար հանածոների որոնողահետախուզական աշխատանքներով, տալիս է դրանց տնտեսական ու արդյունաբերական բնութագիրը։

1922 թվականին Ջագեսի նախագծման ու շինարարության կապակցությամբ, Հովհ. Կարապետյանը ուսումնասիրում է Մցխեթի շրջանի երկրաբանական կառուցվածքը և տալիս է իր եզրակացությունը, այդ կարևոր կառույցի ինժեներաերկրաբանական պայմանների և այն բարձրորակ տեղական շինանյութերով ապահովելու մասին։

Նույն թվականին նա հետազոտում է Նախիջևանի աղահանքերը և տալիս է դրանց բնութագիրը։ Հետագա մի քանի տարիների ընթացքում նա շարունակում է զբաղվել այդ աղահանքերի և քարաղի հարցերով, կազմում է պլաններ ու նախագծեր, առաջարկում է մի շարք տեխնիկական կարևոր միջոցառումներ, որոնք Ադրբեջանի ժողտնտխորհրդի կողմից ընդունվում են 1926 թվականին։

1923 թվականի մարտին, Թիֆլիսում, Ալեքսանդր Մյասնիկյանի անմիջական նախաձեռնությամբ հրավիրվում է Անդրկովկասի տնտեսական խորհրդակցություն, որին ակտիվ մասնակցություն է հանդես բերում նաև Հովհ. Կարապետյանը։ Դեռևս խորհրդակցության նախօրյակին նա հանդես

է գալիս մամուլում մի շարք հոդվածներով, որոնց մեջ վեր է հանում Անդրկովկասի հանքային հարստությունների օգտագործման և լեռնահանքային արդյունաբերության վերականգնման հարցերը։

Այդ խորհրդակցությունում Հով. Կարապետյանը հանդես է գալիս «Անդրկովկասի հանքային հարստությունները» թեմային նվիրված զեկուցումով և մասնակցում է «Արդյունաբերության խնդիրները» հարցի շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը։ Այդ ելույթները կարևոր նշանակություն ունեցան Անդրֆեդերացիայի երկրաբանական ծառայության ստեղծման ու հետագա ամրապնդման, որոնողահետախուզական աշխատանքների ծավալման և լեռնահանքային արդյունաբերության զարգացման համար։

1932—35 թվականների ընթացքում Հով. Կարապետյանը ուսումնասիրում է Վրաստանի ածխարդյունաբերության վիճակը և Տկվիբուլի ու Տկվարչելի հանքավայրերի հետախուզման նյութերի հիման վրա նշում է ածխարդյունահանման հետագա զարգացման ուղիներն ու հեռանկարները։

1924 թվականին Անդրկովկասի ժողկոմխորհը հանձնարարում է Հով. Կարապետյանին Վրաստանում ֆերոմարգանեցի ձուլման ուսումնասիրման և կազմակերպման գործը, որտեղ նա ևս հանդես է բերում ակտիվ մասնակցություն։

Նույն թվականին Անդրկովկասի Կենտգործկոմին առընթեր կազմակերպվում է «Անդրկովկասյան գիտական ասոցիացիա», որի ակտիվ գործիչներից մեկը հանդիսանում է Հով. Կարապետյանը։ Նա այդ թվականին մասնակցում է Ասոցիացիայի գիտական արշավախմբի աշխատանքներին, ուսումնասիրելով Հարավ-Օսեթիայի երկրաբանական կառուցվածքը և օգտակար հանածոները։

1924 թվականին Հով. Կարապետյանը նշանակում է Ադրբեջանի ժողտնտեսխորհի խորհրդատու։ Այստեղ նա կազմում է լեռնահանքային արդյունաբերության վերականգնման ու զարգացման հնգամյա հեռանկարային պլանը, որն ամենայն իրավամբ հանդիսանում է Ադրբեջանի լեռնահանքային արդյունաբերության զարգացման անդրանիկ ծրագիրը։

Այդ նույն թվականին Հով. Կարապետյանը հրավիրվում է Հայաստան, որպես Ալավերդու և Ղափանի լեռնահանքային ձեռնարկությունների խորհրդատու։ Նախկինից ծանոթ լինելով մեր հանրապետության պղնձի հանքավայրերին, նա մեծ ուժ ու եռանդ է նվիրաբերում այդ հանքավայրերի վերականգնման և հետագա որոնողահետախուզական աշխատանքների ճիշտ կազմակերպման ուղղությամբ։ Եվ ահա այստեղ էլ դրսևորվում է նրա տեսական ու հատկապես գործնական գիտելիքների միասնությունը։ Հանքափորի արտահայտուստ հագին նա օր ու գիշեր շրջում է ստորերկրյա «կախարդական» աշխարհի հանքուղիներում և հանքախորշերում, մեծ ոգևորությամբ շարունակում է իր շատ դժվարին աշխատանքը, որոնումներն ու հետազոտությունները։ Հով. Կարապետյանը մշակում է Հայաստանի պղնձի արդյունաբերության վիճակի և զարգացման հեռանկարների հարցերը, կազմում է հանրապետության առաջին հնգամյա պլանի համապատասխան թվերը և հրապարակում է այդ խնդիրներին նվիրված մի շարք հոդվածներ։

1925—1926 թվականներից սկսած մեծ աշխատանքներ են նախաձեռնվում երկրի էլեկտրաֆիկացիայի և ոռոգման խոշոր կառուցումների նախագծումների կապակցությամբ։ Ահա այդ կարևոր բնագավառում ևս Հով.

Կարապետյանը հանդես է բերում ակտիվ մասնակցություն՝ հետազոտելով Անդրկովկասի այդ կառույցների երկրաբանական և ջրաերկրաբանական պայմանները։

1925—26 թվականներին, Հովհ. Կարապետյանը, Ադրբեջանի կառավարության հանձնարարությամբ, էներգետիկ և ոռոգման նպատակների համար, ուսումնասիրում է Թարթառ գետի միջին հոսանքի Սարսանգ—Մադագիս և Ձայլու—Կոլլու տեղամասերը և տալիս նրանց ջրաերկրաբանական նկարագրությունը։

1927 թվականին Դաղստանի էլեկտրաֆիկացիայի և ոռոգման աշխատանքների կապակցությամբ նա հետազոտում և տալիս է Ախտին-չայ, Սամուր և Սուլակ գետերի վրա նախագծվող էլեկտրակայանների տեղամասերի երկրաբանական պայմանները։

Նույն թվականին Թափարավանի էլեկտրակայանի նախագծման և որոնման աշխատանքների կապակցությամբ, Հովհ. Կարապետյանը իր հայրենի Ջավախքում կատարում է մեծ մասշտաբի երկրաբանական-հետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքները հետագայում լույս են տեսնում առանձին գրքով։

Հովհաննես Կարապետյանը էլ ավելի գործունյա մասնակցություն է հանդես բերում Հայաստանում նախագծվող և կառուցվող էներգետիկ և ոռոգման շինարարության բնագավառում։ 1927—1928 թվականներին նա հետազոտում է Ձորագեսի շինարարության ջրաերկրաբանական պայմանները և տալիս է այդ բարդ կառույցի եզրակացությունը։ Հետաքրքրական է նշել, որ տեղում կատարած դաշտային աշխատանքների ընթացքում նրա ամենամոտիկ ուղեկիցներն են եղել անվանի էներգետիկ Հովսեփ Տեր-Աստվածատրյանը և գրող Մարիետա Շահինյանը։

1927—30 թվականների ընթացքում Հովհ. Կարապետյանը հետազոտում է Հայաստանի մի շարք հիդրոտեխնիկական կառուցումների՝ Երևանի և Քանաքեռի էլեկտրակայանների, Ղռերի, Այգրլճի և Սարդարաբադի ջրանցքների, Արաքս և Հրազդան գետերի վրա նախագծվող ամբարտակների և էլի մի քանի շրջանային էլեկտրակայանների ու ոռոգիչ ջրանցքների ջրաերկրաբանական պայմանները և ներկայացնում է համապատասխան հաշվետվություններ ու եզրակացություններ։

Ավելի ուշ, 1931—34 թվականներին, նույնանման աշխատանքներ նա կատարում է Վրաստանում և Ադրբեջանում, տալով Կելասուրի, Բեսլեդկա, Դումբուա, Կասնկա և Նախիջևան-չայ, Կիչ-չայ գետերի վրա նախագծվող հիդրոտեխնիկական կառուցումների երկրաբանական պայմանները։

1928 թվականին լույս է տեսնում Հովհ. Կարապետյանի «Հայկական ՍՍՌ երկրաբանական ակնարկը» գիրքը, որը նրան հանձնարարել էր գրել Պետպլանը, կապված հանրապետության շրջանացման, արտադրողական ուժերի բաշխման ու զարգացման և հանքային հումքի ռեսուրսների օգտագործման հարցերի հետ։ Աշխատությունը հանդիսանում է նրա երկար տարիների ընթացքում Հայաստանի առանձին շրջանների երկրաբանության և օգտակար հանածոների ուսումնասիրության համառոտ ամփոփումը։ «Ակնարկի» մեջ հեղինակը հատկապես կանգ է առնում մետաղական հանքավայրերի և հանքային աղբյուրների վրա, տալիս է նրանց ընդհանուր բնութագիրը։

Հայաստանի հանքային ջրերի մասին խոսելիս չի կարելի չնշել Հովհ.

Կարապետյանի անունը։ Դեռևս 1925 թվականին նա ժողտնտղերխորհում հանդես է գալիս «Հայաստանի հանքային ապրյուրները» զեկուցումով, որը խթան է հանդիսանում այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ կազմակերպելուն։ 1929 թվականին նա ընտրվում է Առժողկոմատի գիտաբժշկական խորհրդի անդամ և հետագա տարիներին, անվանի մասնագետներ Ա. Դեմյոխինի, Լ. Հովհաննիսյանի և Ա. Մազաթյանի հետ մեծ գործ է կատարում հանքային ապրյուրների հետազոտման, Արզնի կուրորտի բարեկարգման և ընդհանրապես կուրորտաշինարարության բնագավառներում։

Բացի հանքային ջրերից, Հովհ. Կարապետյանը զբաղվել է նաև քաղցրահամ ջրերի ուսումնասիրության և քաղաքների ու ավանների ջրամատակարարման հարցերով։ Դեռ 1923 թվականին, նա ուսումնասիրում է Արագած լեռան և Արարատյան դաշտավայրի ջրաբերության և ջրամատակարարման հարցը, մշակում է վերերկրյա և ստորերկրյա ջրերի օգտագործման մի քանի գործնական միջոցառումներ։ 1925 թվականին նա հետազոտում է Էջմիածնի, Ղամարլուի և Վեղիի շրջանների ջրաերկրաբանական պայմանները և շարունակում է աշխատել արտեզյան ջրհորների փորման և ճահճակալած հողերի յուրացման հարցերի մշակման վրա։

Վերջապես Հովհ. Կարապետյանը զբաղվել է Կրիխ-Բուլաղի և Արզնու քաղցրահամ աղբյուրների հարցերով, կապված Երևանի ջրամատակարարման և ջրատարի շինարարության հետ։ Նա զբաղվել է նաև Լենինականի, Արթիկի, Արարատի և այլ բնակավայրերի ջրամատակարարման խնդիրներով։

1930 թվականին անվանի երկրաբանը նշանակվում է Հայաստանի ժողկոմխորհի և Անդրկովկասյան պետական երկրաբանական հետախուզական վարչության մշտական խորհրդատու, իսկ ավելի ուշ, 1932—34 թվականներին՝ նաև «Քիմկոմբինատ», «Դաշքեսանտրոյ» և «Զայգրուգիա» խոշոր կազմակերպությունների ու Անդրկովկասյան երկաթուղային վարչության խորհրդատու։ Այդ պաշտոններում նա դրսևորում է իրեն ոչ միայն որպես ականավոր երկրաբանի, այլև, մեծ կազմակերպչի, որը զգալի գործ է կատարում Անդրկովկասի մասշտաբով հանքավայրերի հետազոտման ու շահագործման, ջրաերկրաբանական և շինարարական խոշոր աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման հարցերում։

1931—32 թվականներին Հովհ. Կարապետյանը աշխատում է Մոսկվայում, որպես Մոսկվա—Վոլգա ջրանցքի գլխավոր խորհրդատու և նրա նախագծի հեղինակի տեղակալ։ Այստեղ ևս նա կատարում է անգնահատելի աշխատանք, ղեկավարելով նախագծի ինժեներական երկրաբանության, ջրամատակարարման և հիդրոտեխնիկական կառուցումների բնագավառը։ Նա տալիս է մի քանի ամբարտակների ջրաերկրաբանական պայմանների եզրակացություններ, կազմում է Վոլգայի կապտաժի նախահաշիվը, հանդես է գալիս այդ հարցերին նվիրված զեկուցումներով և վերջապես ակտիվ մասնակցություն է ունենում Մուրության ջրային ռեսուրսների հետագա օգտագործման հարցերի մշակմանը։

1934 թվականի վերջերին, Հայաստանի կառավարության հրավերով, Հովհ. Կարապետյանը Թբիլիսից փոխադրվում է Երևան, երկրաբանական ինստիտուտ կազմակերպելու համար։ Նա տեղափոխում է Երևան իր անձնական շատ հարուստ գրադարանը և շատ արժեքավոր երկրաբանական հավաքածուները, նաև երկրաբանական թանգարան հիմնելու համար։

Հայաստանում երկրաբանական գիտահետազոտական ինստիտուտ կազմակերպելու գործը ինքնըստինքյան ներկայացնում էր զգալի դժվարություն։ Հարկավոր էր ունենալ շենք, լաբորատոր բազա, սարքավորում, մասնագիտական գրադարան և համապատասխան գիտատեխնիկական կադրեր։ Ահա այն հիմնական խնդիրները, որոնցով պետք է զբաղվեր անվանի երկրաբանը այդ դժվարին հարցերի լուծման ճանապարհին։ Սակայն Հովհ. Կարապետյանը, այն հաղվագեպ ուժի, մարքի ու եռանդի տեր մարդն էր, որը չէր վախենում ոչ մի դժվարությունից և ուներ կազմակերպչական աշխատանքի մեծ ձիրք։ Եվ նա մեծ ոգևորությամբ անցնում է գործի, որովհետև իրականացել էր իր վաղեմի երազանքը. հայ ժողովուրդը պետք է ուսումնասիրեր մի կարևոր գիտահետազոտական հիմնարկ, որը պլանավորված կերպով պետք է ուսումնասիրեր երկրի երկրաբանական կառուցվածքը և ընդերքում տարածված օգտակար հանածոները. մի նվիրական բան, որի մասին նա երազել էր դեռևս 1900-ական թվականների սկզբներին։ Եվ Հովհ. Կարապետյանը Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի անմիջական օգնությամբ մեծ գործ է կատարում ինստիտուտի գիտահետազոտական բազայի ստեղծման և հետագա ընդարձակման ուղղությամբ։

Կարճ ժամանակ անց, 1935 թվականի փետրվարին, Հայկական ՍՍՀ ժողկոմսովետի որոշմամբ հիմնվում է Միության Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալ (ԱՍՍՌՀԱՆ), որի կազմի մեջ մտնում է նաև երկրաբանական ինստիտուտը։ Նույն որոշումով Հովհ. Կարապետյանը նշանակվում է ինստիտուտի դիրեկտոր, հաստատվում է ֆիլիալի նախագահության անդամ և արշավախմբերի գիտահետազոտական հանձնաժողովների նախագահ։

Հայկական ֆիլիալի ստեղծումը երկրաբանական ինստիտուտի և անձամբ Հովհ. Կարապետյանի համար հանդիսացավ տեսական ու գործնական աշխատանքների կազմակերպման և ծավալման մի նոր շրջան։ Նա զգալի աշխատանք է կատարում ինստիտուտի գիտատարատպրական բազայի ստեղծման, շնորհալի մասնագիտական կադրերի հավաքագրման ու պատրաստման և գիտահետազոտական մի քանի թեմատիկ աշխատանքների կատարման ուղղությամբ։

1935 թվականի նոյեմբերին, Հայաստանի Կենտգործկոմը Հովհ. Կարապետյանին շնորհում է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում, իսկ 1936 թվականի հունիսին՝ Միության գիտությունների ակադեմիայի նախագահությունը նրան Անդրկովկասի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում կատարած աշքի ընկնող ծառայությունների համար, առանց դիսերտացիա պաշտպանելու շնորհում է երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտորի աստիճան։

1936 թվականին լույս է տեսնում Հովհ. Կարապետյանի նոր աշխատությունը, նվիրված Փամբակի հովտի գենուդացիոն պրոցեսներին։ Անհրաժեշտ է նշել, որ այն հանդիսանում է երկրաբանական ինստիտուտի գծով հրատարակված անդրանիկ գրքույկը, որի հեղինակը քննարկում է Հայաստանի երկրաբանության և ջրաերկրաբանության հետ կապված ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող մի կարևոր հարց և անում է գործնական նշանակություն ունեցող առաջարկություններ։

Հովհ. Կարապետյանը մինչև 1939 թվականը որպես դիրեկտոր գլխավորեց երկրաբանական ինստիտուտի աշխատանքները և միայն հիմանդության

պատճառով հեռացավ այդ պաշտոնից։ Սակայն նա մինչև իր մահը մնաց ինստիտուտի գիտական խորհրդի անդամ և խորհրդատու, շարունակեց օգնել ինստիտուտին նրա առաջ դրված գիտահետազոտական խնդիրների լուծման և որակյալ կադրերի պատրաստման ու աճեցման ամենապատասխանատու գործում։

1943 թվականի նոյեմբերին ստեղծվում է Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիան, որի կազմի մեջ մտնող մի քանի ինստիտուտների շարքում իր պատվավոր տեղն է գրավում նաև Հովհ. Կարապետյանի կողմից հիմնադրված ու այնքան սիրված Երկրաբանական ինստիտուտը։ Դրանով հիմք է դրվում Հայաստանի երկրաբանության գիտական ուսումնասիրության մի նոր, ավելի արդյունավոր շրջանի։

Եվ այսօր, ուրախալի է նշել, որ իր գոյության շորս տասնամյակի ընթացքում, ինստիտուտը մի փոքր գիտական օջախից աճել ու վեր է ածվել գիտահետազոտական մի խոշոր կենտրոնի, որն ունի ժամանակակից սարքավորումներով հագեցած բազմաթիվ բաժիններ, լաբորատորիաներ ու կաբինետներ, հենց նրա Կարապետյանի պայծառ անունը հավերժացնող հիանալի թանգարան, հարուստ մասնագիտական գրադարան և ստեղծագործող կոլեկտիվ, որն աշխատում է այնպիսի գիտական և գործնական նշանակություն ունեցող պրոբլեմների մշակման վրա, որոնց արդյունքները մեր երկրի սահմաններից դուրս ստացել են լայն ճանաչում։

1935—40 թվականներին, Հովհ. Կարապետյանը, անվանի երկրաբան, պրոֆ. Տիգրան Ջրբաշյանի հետ, զգալի աշխատանք է կատարում նաև Երևանի Պետական համալսարանի աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետում։ Այդ տարիներին նա վարում է ընդհանուր երկրաբանության ամբիոնի վարիչի և պետական քննական հանձնաժողովի նախագահի պաշտոնները, կազմում և վերամշակում է մի շարք առարկաների ուսումնական ու արտադրական ծրագրերը, կազմակերպում է Հայաստանի և Կովկասի երկրաբանությանը և աշխարհագրությանը նվիրված դասախոսություններ, մտահոգվում է մայրենի լեզվով դասագրքեր ստեղծելու հարցով և այլն։

1937 թվականի հունիսին Մոսկվայում հրավիրվում է Միջազգային 17-րդ երկրաբանական կոնգրես, որի աշխատանքներին ակտիվ մասնակցություն է հանդես բերում նաև Հայաստանի երկրաբանական ծառայության ավագագույն ներկայացուցիչ Հովհ. Կարապետյանը։ Հանդիսանալով կոնգրեսի կազմկոմիտեի անդամ, նա զգալի գործ է կատարում Հայաստանում կոնգրեսին նախապատրաստվելու, պատգամավորների Կովկասյան էքսկուրսիաների խմբի մասնակիցների դիմավորման, տեղում շրջագայելու և բացատրություններ տալու հարցերում։

Կոնգրեսում Հովհ. Կարապետյանը հանդես է գալիս «1937 թվականի հունվարի 7-ի Երևան քաղաքի և նրա շրջակայքի երկրաշարժի բնույթի և պատճառների մասին» թեմային նվիրված զեկուցումով, որը լսվում է մեծ հետաքրքրությամբ։ Զեկուցման մեջ ընդհանուր գծերով տալիս է Հայաստանի երկրաշարժերի պատմությունը, սեյսմիկ շրջանները, երկրաբանական պայմանները, սեյսմիկ շրջանացումը և հակասեյսմիկ շինարարության խնդիրները, իսկ ավելի մանրամասն կանգ է առնում Լենինականի (1926), Գորիսի (1931) և Երևանի երկրաշարժերի ցնցումների բնութագրման ու հետևանքների վրա։

1937 թվականը Հայաստանի երկրաբանական ծառայության և գիտության ու մշակույթի բնագավառի համար նշանավոր է մի շատ կարևոր իրադարձությամբ։ Հովհաննես Կարապետյանի կողմից մոտ երեք տասնամյակի ընթացքում հավաքած շատ արժեքավոր ու խիստ բազմազան երկրաբանական հարուստ հավաքածուների բազայի վրա, նրա անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ Երևանում հիմնադրվում է Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի Երկրաբանական ինստիտուտի թանգարանը։

Դեռ շատ տարիներ առաջ, երբ տակավին երիտասարդ երկրաբանը անցնում էր երկրից-երկիր և շրջում էր հանքավայրից-հանքավայր ու խնամքով հավաքում էր իր ապագա հավաքածուների առաջին նմուշները՝ «քարերը», նա նպատակ էր դրել ստեղծել «քարերի թանգարան» և այն դարձնել ժողովրդի սեփականությունը։

Վերջապես իրականանում է ականավոր երկրաբանի երկար տարիների իղձը՝ մի հարկի տակ կենտրոնացնել ու ցուցադրել իր հավաքած «քարերը», այն քարերը, որոնք նա հավաքել էր մեծ դժվարությունների ու զրկանքների գնով, որոնց նա նվիրաբերել էր իր ողջ կյանքը, որոնց նա տվել էր ամբողջ ուժը, սերն ու էությունը։ Եվ իր երջանիկ կյանքի զարունն ապրող անվանի երկրաբանը «երգեց քարերի գարթոնքը և կյանքի կոչեց նրանց»։

Ներկայումս երկրաբանական թանգարանը տեղ է գտել մի ինքնատիպ «քարերի գանձարան», որը գիտահանրամատչելի ձևով ցուցադրում է այն խոշոր հաջողությունները, որոնք ձեռք են բերել մեր երկրաբանները հանրապետության երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների ուսումնասիրման և հետազոտման պատվավոր գործում։ Թանգարանը տանում է գիտահետազոտական աշխատանք և կազմակերպում է աշխատավորների և ուսանող-դպրոցականների լայն շրջաններում երկրաբանության հարցերի շուրջը պրոպագանդա։ Թանգարանը անընդհատ լրացվում է երկրաբանական ինստիտուտի և հանրապետության երկրաբանական ծառայության աշխատողների նոր, արժեքավոր հավաքածուներով և ներկայումս այն ամենայն իրավամբ դասվում է Միության լավագույն երկրաբանական թանգարանների շարքը։

Հովհաննես Կարապետյանի մահից հետո, Հայաստանի ժողկոմխորհը բավարարեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահության դիմումը և նրա անունը շնորհեց ականավոր երկրաբանի կողմից հիմնադրված թանգարանին։ Եվ այսօր, նրա պայծառ գործն ու անունը հավերժացնող երկրաբանական թանգարանը, որպես անձեռակերտ մի հուշարձան տանում է Հայկական գոգտրիկ լեռնաշխարհի հարուստ գանձերը գալիք սերունդներին։

Կյանքի վերջին տարիներին, Հովհ. Կարապետյանը չնայած առողջական ծանր վիճակին, շարունակում է մասնակցել երկրի հասարակական, տնտեսական ու քաղաքական կյանքին։ Նա իր հարուստ փորձն ու գիտելիքները շարունակում է հաղորդել հանրապետության երկրաբանական ծառայության աշխատողներին, տալիս է արժեքավոր խորհուրդներ երկրաբանության առաջ ծառացած խնդիրների լուծման և կադրերի պատրաստման հարցերում։ Այդ տարիներին բազմավաստակ երկրաբանը գրում է տեղական հումքի օգտագործման հարցերին նվիրված մի շարք հոդվածներ ու ամփոփում է նախկինում կատարած հետազոտությունների արդյունքները։

Հովհաննես Կարապետյանը վախճանվեց Երևանում, 1943 թվականի դեկ-

տեմբերի 4-ին, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո։ «Հանձինս Հ. Կարապետյանի,— ասվում է մահախոսականում,— մենք կորցրինք մի խոշորագույն մասնագետ կիրառական երկրաբանության բնագավառում, որը ուժ ու եռանդ է ներդրել մեր երկրի արդյունաբերության վերականգնման և շինարարության գործի մեջ»։

Հովհաննես Կարապետյանի թողած գրական ժառանգությունը բավականին մեծ է և բազմազան։ Նա թողել է մոտ երկու հարյուր տպագիր աշխատություն ու հոդված և այդքան էլ ձեռագիր հաշվետվություն, եզրակացություն ու զեկուցագիր։ Նրա աշխատությունների ցանկը նայելիս, մարդ զարմանում է, թե որքան շատ բնագավառներ է ընդգրկել նա։ Բազմավաստակ երկրաբանը ստեղծագործել է ոչ միայն երկրաբանության (լայն առումով) և լեռնահանքային արդյունաբերության, այլև շինարարության, պատմության, գրականության և արվեստի բնագավառներում։

Անվանի երկրաբանի կյանքը և գործը մի հիանալի դպրոց է, կարոտ բազմակողմանի և մանրազնին ուսումնասիրության։ Նա իմաստավորեց իր կյանքը և անջնջելի հետքեր թողեց Հայաստանի և Անդրկովկասի երկրաբանության և լեռնային գործի պատմության մեջ։ Սերտորեն կապված լինելով իր հարազատ ժողովրդի հետ, նա անշեջ սիրով սիրել է մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնացել նրան։ Ժողովուրդն էլ իր հերթին սիրեց ու մեծարեց նրան։ «Երկրի բժշկին» (այդպես էին անվանում նրան), Հայաստանի երկրաբանության առաջին սերմնացանին ու լեռնահանքային գործի մեծ նահապետին։

ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական
գիտությունների ինստիտուտ

Ընդունված է 30.IV.1975.

Л. А. АВАКЯН

ТРУЖЕНИК ГЕОЛОГИИ И ГОРНОГО ДЕЛА

Резюме

Ованес Тигранович Карапетян (1875—1943)—один из видных ученых и организаторов геологической службы в Армении. Его разносторонняя и плодотворная деятельность сыграла значительную роль в изучении геологического строения и полезных ископаемых, а также в развитии горнорудной промышленности Армении и Закавказья.

О. Т. Карапетян явился основателем Геологического института (1935) и Геологического музея (1937) АН Армянской ССР. Свои обширные знания, блестящий талант и неисчерпаемую энергию он целиком отдал делу развития геологической службы и воспитанию молодых кадров. Ованес Тигранович творил в самых различных областях социалистического строительства и культуры.

В работе приводятся основные вехи жизни и деятельности этого выдающегося геолога.